**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2**
**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ 20.08.2020թ. ԿՆՔՎԱԾ N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/44» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան «24» դեկտեմբերի 2020թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պաշտոնակատար Ն.Գաբրիելյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ջանյանի (այսուհետ՝ Վաճառող), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները, և հիմք ընդունելով 20.08.2020թ. կնքված N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/44» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր), 8.5 և 8.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հաշվի առնելով Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ենթակա քանակից 19 510 (տասնինը հազար հինգ հարյուր տասը) կիլոգրամի մատակարարման համար ֆինանսական միջոցների առկայությունը և Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման անհրաժեշտությունը՝ Կողմերը որոշեցին Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

1.2 <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ>> վերտառությամբ Հավելված N 1-ում «մատակարարման ժամկետը» սյունակներից վերջին սյունակում «50 օրացուցային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «մինչև 25.12.2020թ.» բառերով:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| *Դատական դեպարտամենտ* | *<<ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ>> ՍՊԸ* |
| Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15,17 | Հասցե՝ ք. Երևան, Մաշտոցի պ. 16 Ա, 4 |
| Հ/Հ՝ 900011192151, 900011025757 | ՀՀ՝ 2050422209671001 |
| ՀՎՀՀ՝ 02583241 | ՀՎՀՀ՝ 02584897 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | <<Ինեկոբանկ >> ՓԲԸ |
| Ղեկավարի պաշտոնակատար Ն. Գաբրիելյան | Տնօրեն Ա. Ջանյան |
| ստորագրություն | ստորագրություն |

**Հավելված N 1**

**«*24*» դեկտեմբերի 2020թ. կնքված N 2 համաձայնագրի**

*(Հավելված N 2*

*« 20 » օգոստոսի 2020 թ. կնքված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/44» ծածկագրով պայմանագրի)*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | |
| | | | Հ/Հ՝ 900011192151 | | | |
| | | | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | **Ընդամենը** |
| 1 | 30197622/504 | Թուղթ, A4 ձևաչափի | 17 867 140 | 17 867 140 | 17 867 140 | **17 867 140** |
| | | | Հ/Հ՝ 900011025757 | | | |
| 1 | 30197622/7 | Թուղթ, A4 ձևաչափի | - | - | 11 432 860 | **11 432 860** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**

***Դատական դեպարտամենտ***

Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15,17

Հ/Հ՝ 900011192151, 900011025757

ՀՎՀՀ՝ 02583241

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պաշտոնակատար՝ Ս. Գաբրիելյան

/ստորագրություն/

**ՎԱՃԱՌՈՂ**

***<<ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ>> ՍՊԸ***

Հասցե՝ ք. Երևան, Մաշտոցի պ. 16 Ա, 4

ՀՀ՝ 2050422209671001

ՀՎՀՀ՝ 02584897

<<Ինեկոբանկ >> ՓԲԸ

Տնօրեն՝ [illegible]

/ստորագրություն/